

Միրելի՛ սյունեցիներ, հարգարժան հյուրեր, քաջագուն զինվորականներ...

Ուրախալի է, որ այսօր հաղթանակած բանակի ստորաբաժնման 20-ամյակին մասնակցելու առիթ ունենք: Հաղթանակ, որ կերտվել է նաև այս գորագնդի ակունքներում կանգնած նվիրյալ հայորդիների կյանքի ու անսահման նվիրումի շնորհիվ: Գաղտնիք չէ, որ հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ Արցախից հետո հանրապետության մարզերից Սյունիքն էր, որ իր ուսերին կրեց գոյամարտի ամենածանր բեռը: Ու մեր լինելիության կարևոր այդ հանգրվանում անգնհատելի է սխիանցնիների դերակատարումը: Հավատացնում եմ, որ պետությունը ասելիք ու անելիք ունի մեր նվիրյալների առաջ: Իհարկե, նրանք արժանի գնհատանքի դեռ չեն արժանացել, բայց նաև փաստենք, որ հաղթանակած տղաները այն ժամանակ զենք բռնեցին, ոչ թե հետագա մեծարանքի, այլ ազատ հայրենիքում ապրելու համար: Եվ այսօր ապրողներիս պարտքն է հիշել, մեծարել ու գնահատել գոյամարտի բոլոր մասնակիցներին ու առաջին հերթին նրանց, ովքեր մարտի դաշտից տուն չդարձան: Գլուխ եմ խոնարհում զոհված ազատամարտիկների ընտանիքների ու հատկապես հերոսներ ծնած մայրերի առաջ: Նախախնամության կամքով այսօր նաև կանանց միջազգային տոնն է: Առիթից օգտվելով շնորհավորում եմ բոլոր կանանց: Հավատացնում եմ, որ դուք եք եղել մեր օջախները հայ պահող սյունը: Այդպես է եղել միշտ ու չեմ կասկածում, որ կլինի նաև ապագայում: Ուստի բոլորիդ մաղթում եմ անձնական երջանկություն և առողջություն:

Հարգելի՛ զինվորականներ. ամենքիս կյանքում լինում է այն անկեղծության պահը, երբ փորձում ենք հասկանալ թե ինչ պետք է տանք հայրենիքին մերօրյա անկախությունը, խաղաղությունը հարատև դարձնելու համար: Մեր դեպքում ամուր թիկունք ապահովելու հանձնարություն ունենք, իսկ Ձեր դեպքում հայրենյաց տունը մշտարթուն անառիկ պահելն է: Այդ պատասխանատու գործում բոլորիդ մաղթում եմ, բարի, անվտանգ ծառայություն ու նորանոր հաջողություններ, թե անձնական կյանքում, թե ծառայության ընթացքում:

Շնորհավոր 20-ամյակդ Միսական գունդ, մեծարանք նահատակներիդ, փառք ու պատիվ նախկին, ներկա ու ապագա զինվորականներիդ:

Շնորհակալություն: